



Համարը N 527-Ն	Տեսակը Ինկորպորացիա
Տիպը Որոշում	Կարգավիճակը Գործում է
Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2009.10.15/28(346)	Ընդունման վայրը Երևան
Հոդ. 324	Ընդունման ամսաթիվը 26.08.2009
Ընդունող մարմինը Հանրային ծառայությունները	Ստորագրման ամսաթիվը 26.08.2009
Ստորագրող մարմինը Հանրային ծառայությունները	
կարգավորող հանձնաժողով	
կարգավորող հանձնաժողովի նախագահ	
Վավերացնող մարմինը	Վավերացման ամսաթիվը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 25.10.2009	Ուժը կորցնելու ամսաթիվը

#### **☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՍԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈԿԱՅԱՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ, ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՍՏՈՒԳԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
29 սեպտեմբերի 2009 թ.  
Պետական գրանցման թիվ 60609327

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

N 527-Ն

26 օգոստոսի 2009 թ.  
ք. Երևան

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՍԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՏՐԱՍԱԴՐՄԱՆ, ՍԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈԿԱՅԱՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ, ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՍՏՈՒԳԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի գ) ենթակետը և 21-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հաստատել՝
  - 1) սիրողական ռադիոպերատորների թույլտվությունների դասակարգման և տրամադրման կանոնները (հավելված N 1),
  - 2) սիրողական ռադիոկայանների գրանցման, տեղադրման և օգտագործման կանոնները (հավելված N 2),
  - 3) որակավորման չափանիշներին սիրողական ռադիոպերատորների համապատասխանությունն ստուգելու կարգը (հավելված N 3):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի  
նախագահ՝

Ռ. Նազարյան

Հավելված N 1

Հաստատված է  
ՀՀ հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի  
2009 թ. օգոստոսի 26-ի  
N 527-Ն որոշմամբ

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

## ՍԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Սույն կանոնները սահմանում են սիրողական ռադիոսպեռատորների թույլտվությունների դասակարգման, թույլտվությունների հայտի (դիմումի) ընդունման, քննարկման և տրամադրման, կասեցման և դադարեցման, դրանց գործողության ժամկետի երկարաձգման, թույլտվության կորստի դեպքում կրկնօրինակի տրամադրման կարգը:

(նախաբանը լրաց. **01.04.15 N 56-Ն**)

### Գ Լ ՈՒ Խ 1

#### ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն կանոններում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

Թույլտվություն՝ Հանձնաժողովի կողմից ֆիզիկական անձին տրված փաստաթուղթ, որը հավաստում է սիրողական ռադիոյով զբաղվելու նրա իրավունքը.

Սիրողական ռադիո՝ շահույթի նպատակ չհետապնդող ռադիոկապ ռադիոսիրողների միջև, այդ թվում՝ հաղորդակցություն, որն ուղղակիորեն առնչվում է մարդու կյանքի նկատմամբ որևէ սպառնալիքի կամ որևէ դժբախտ պատահարի կանխարգելման, կամ դժբախտ պատահարների հետևանքների վերացման հետ:

Սիրողական ռադիոսպեռատոր (այսուհետ՝ Ռադիոսիրող)՝ սիրողական ռադիոկապ իրականացնող ֆիզիկական անձ:

Սիրողական ռադիոկայան (այսուհետ՝ Ռադիոկայան)՝ ռադիոկապի հնարավորություն ընձեռող ռադիոսարքավորում (ինքնաշեն կամ գործարանային արտադրության), որը շահագործվում է սիրողական ռադիոյի համար հատկացված ռադիոհաճախականությունների տիրույթում.

Հայտատու՝ սույն կանոնների համաձայն Թույլտվություն ստանալու կամ Թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման նպատակով Հանձնաժողով դիմած անձ.

Հայտ՝ սույն կանոնների համաձայն Թույլտվություն ստանալու կամ Թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման համար Հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի փաթեթ.

Գործ՝ անձի անվանական թղթապանակ, որը պարունակում է սույն կանոններով սահմանված՝ Թույլտվություն ստանալու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և անձի գործունեությանը վերաբերող այլ անհրաժեշտ փաստաթղթեր (տեղեկություններ):

### Գ Լ ՈՒ Խ 2

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2. Սույն կանոնները տարածվում են Հայաստանի Հանրապետության Ռադիոսիրոդների, ինչպես նաև այն օտարերկրյա Ռադիոսիրոդների վրա, որոնք ունեն Հանձնաժողովի կողմից տրված Հայաստանի Հանրապետության տարածքից եթերում աշխատելու թույլտվություն:

3. Ռադիոսիրոդների թույլտվությունները տրամադրվում են մինչև 10 տարի ժամկետով՝ Հայտատուի ներկայացրած Հայտի հիման վրա: Հայտատուն Հայտը կարող է ներկայացնել նաև Հայաստանի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիայի միջոցով:

(3-րդ կետը խմբ. 01.04.15 N 56-Ն)

4. Օտարերկրյա Ռադիոսիրոդների թույլտվությունները տրվում են մեկ տարուց ոչ ավելի ժամկետով՝ միայն Հայաստանի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիայի միջնորդությամբ: Թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը օտարերկրյա Ռադիոսիրոդը Հանձնաժողով է ներկայացնում սիրողական ռադիոկայանի աշխատանքի սկզբի ենթադրվող ժամկետից առնվազն մեկ ամիս առաջ:

(4-րդ կետը փոփ. 01.04.15 N 56-Ն)

5. Թույլտվությունների յուրաքանչյուր կարգի համար օգտագործվող ռադիոհաճախականությունները տրամադրում է Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության հաճախականությունների բաշխումների աղյուսակում իր տնօրինման տակ գտնվող սիրողական ռադիոյին հատկացված՝ սույն կանոնների N 2, N 3 և N 4 հավելվածներում նշված ռադիոհաճախականությունների տիրույթից:

6. Թույլտվությունը չի կարող օգտագործման տրվել այլ անձանց, օտարվել կամ գրավադրվել՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

7. Թույլտվություն ունեցող անձն իր գործունեությունն իրականացնելիս, պարտավոր է սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման ընթացքում ապահովել մարդկանց կյանքի և առողջության, շրջակա միջավայրի անվտանգությունը:

8. Թույլտվություն ունեցող անձինք կարող են օգտագործել սույն կանոններով հատկացված սիրողական ռադիոհաճախականությունների տիրույթները թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից և թույլտվության գործողության ժամկետում:

### Գ Լ ՈՒ Խ 3

#### ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

9. Ըստ ռադիոսպորտորների որակավորման թույլտվությունները դասակարգվում են երեք կարգի՝ առաջին, երկրորդ և երրորդ: Յուրաքանչյուր կարգ բնորոշվում է ռադիոհաճախականությունների թույլատրված տիրույթներով, ճառագայթման տեսակով և հաղորդչի թույլատրված էլքային հզորությամբ (Հավելվածներ N 2, N 3, N 4):

10. Թույլտվությունները տրվում են՝

1) 1-ին, 2-րդ կարգերը՝ 18 տարին լրացած անձանց.

2) 3-րդ կարգը՝ 18 տարին լրացած անձանց, ինչպես նաև 14-ից մինչև 18 տարեկան անչափահասներին՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ:

(10-րդ կետը խմբ. 01.04.15 N 56-Ն)

#### Գ Լ ՈՒ Խ 4

### ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՅՏԻ ՔՆՆԱԲԿՈՒՄԸ, ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

11. Թույլտվություն ստանալու համար անձը Հանձնաժողով է ներկայացնում համապատասխան տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնների N 1 հավելվածում նշված փաստաթղթերի և N 5, N 6 հավելվածներով տրված ձևերի:

12. Հայտը և նրանում ընդգրկված փաստաթղթերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոններով սահմանված պահանջներին:

13. Հայտատուն, օրենքով սահմանված կարգով, պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած փաստաթղթերի տեղեկությունների հավաստիության համար:

14. Հայտատուի ներկայացրած Հայտը մուտքագրվում է Հանձնաժողովում: Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումը ստուգում է Հայտի ամբողջականությունը, նրանում ընդգրկված փաստաթղթերի ձևակերպման ճշտությունն ու համապատասխանությունը սույն կանոնների N 1, N 5 և N 6 հավելվածներին:

15. Ռադիոսիրոդի որակավորման կարգը փոփոխվելու դեպքում նոր Թույլտվություն ստանալու համար անձը Հանձնաժողով է ներկայացնում որակավորման հանձնաժողովի կողմից տրամադրված ռադիոսիրոդի կարգը հավաստող փաստաթուղթ, որի հիման վրա նրան տրամադրվում է նոր Թույլտվություն: Թույլտվության պատճենը պահվում է Գործում:

16. Հայտը չի ընդունվում ուսումնասիրության, եթե՝

1) նրանում ընդգրկված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոններով սահմանված պահանջներին.

2) ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում առկա են անճշտություններ և անհամապատասխանություններ:

17. Հանձնաժողովը Հայտի ստուգման բացասական արդյունքի մասին գրավոր տեղեկացնում է Հայտատուին՝ Հայտն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում: Հայտի ստուգման բացասական արդյունքի դեպքում Հայտը պահպանվում է Հանձնաժողովում:

(17-րդ կետը խմբ. 01.04.15 N 56-Ն)

18. Հայտատուն, Հանձնաժողովի կողմից Հայտի ստուգման արդյունքում հայտնաբերված թերությունները վերացնելուց կամ բացակայող փաստաթղթերը լրացնելուց հետո, դրանք ներկայացնում է Հանձնաժողով: Այդ դեպքում Հայտատուն և Հանձնաժողովն առաջնորդվում են սույն կանոնների 14-17-րդ կետերով սահմանված պահանջներով և ժամկետներով:

19. Հայտի ստուգման դրական արդյունքի դեպքում Հանձնաժողովն սկսում է Հայտի քննարկման գործընթացը և ընդունում համապատասխան որոշում՝ Հայտն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

(19-րդ կետը խմբ. 01.04.15 N 56-Ն)

20. Հանձնաժողովը Հայտը մերժում է, եթե Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկությունները թերի են, կեղծ կամ խեղաթուրված, չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջներին:

21. Թույլտվություն տրամադրելու կամ Հայտը մերժելու վերաբերյալ որոշման պատճենը, այն ընդունելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում, Հանձնաժողովը պատշաճ ձևով հանձնում կամ ուղարկում է Հայտատուին:

(21-րդ կետը խմբ. 01.04.15 N 56-Ն)

22. Թույլտվությունը Հայտատուին հանձնվում է առձեռն, իսկ մինչ այդ պահվում է Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումում:

(22-րդ կետը խմբ. 01.04.15 N 56-Ն)

23. Հայտի մերժման մասին Հանձնաժողովի որոշումը չի կարող ազդեցություն ունենալ անձի հաջորդ Հայտերի քննարկման վրա:

24. Հանձնաժողովում յուրաքանչյուր Թույլտվություն ունեցող անձի համար վարվում է հաշվառման գործավարություն և կազմվում է Գործ:

25. Թույլտվություն ստացած անձի ստորագրությամբ Թույլտվության ստացման կտրոնը (հավելված N 7) պահվում է Գործում:

26. Թույլտվության գործողությունը դադարեցվելու դեպքերում Գործը պահվում է Հանձնաժողովում:

27. Թույլտվության՝ սույն կանոններով սահմանված պայմանները խախտելու դեպքում անձը ենթարկվում է պատասխանատվության՝ օրենքով և Հանձնաժողովի կողմից սահմանված կարգի համաձայն:

## Գ Լ ՈՒ Խ 5

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄԸ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՄՏԻ  
ԴԵՊԲՈՒՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՍՏԱՆԱԼԸ

28. Թույլտվությունում ամրագրված ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության դեպքում Թույլտվություն ունեցող անձը պարտավոր է Թույլտվության գործողության ժամկետի ավարտից առնվազն 15 աշխատանքային օր առաջ Հայտով դիմել Հանձնաժողով:

(28-րդ կետը փոփ. 01.04.15 N 56-Ն)

29. (կետն ուժը կորցրել է 01.04.15 N 56-Ն)

30. (կետն ուժը կորցրել է 01.04.15 N 56-Ն)

31. (կետն ուժը կորցրել է 01.04.15 N 56-Ն)

32. (կետն ուժը կորցրել է 01.04.15 N 56-Ն)

33. Թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման կամ երկարաձգման մերժման վերաբերյալ որոշման պատճենը, այն ընդունելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում, Հանձնաժողովը պատշաճ ձևով հանձնում կամ ուղարկում է Հայտատուին:

(33-րդ կետը խմբ. 01.04.15 N 56-Ն)

34. Հայտը մերժվում է, եթե՝

1) Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, կեղծ, խեղաթյուրված կամ ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

2) առաջին անգամ տրված Թույլտվության գործողության ժամկետի ընթացքում Թույլտվություն ունեցող անձը գործունեությունն իրականացրել է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն կանոնների էական խախտմամբ.

35. Թույլտվության կորստի դեպքում Թույլտվություն ունեցող անձն այդ մասին հայտարարություն է հրապարակում մամուլում, որից 15 օր հետո դիմում է Հանձնաժողով: Դիմելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում Թույլտվություն ունեցող անձն ստանում է Թույլտվության կրկնօրինակը:

## Գ Լ ՈՒ Խ 6

### ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՒ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

36. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հանձնաժողովի իրավական ակտերի կամ սույն կանոնների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում, Հանձնաժողովը կարող է կասեցնել կամ դադարեցնել Թույլտվությունը:

37. Թույլտվությունը կարող է կասեցվել կամ դադարեցվել Թույլտվություն ունեցող անձի դիմումի հիման վրա կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ:

38. Թույլտվություն ունեցող անձի դիմումի հիման վրա Թույլտվությունը կասեցվում կամ դադարեցվում է դիմումն ստանալու (Հանձնաժողովում մուտքագրվելու) օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում և համարվում է կասեցված կամ դադարեցված Թույլտվություն ունեցող անձի դիմումն ստանալու (Հանձնաժողովում մուտքագրվելու) օրվանից, եթե Թույլտվություն ունեցող անձն իր դիմումի մեջ ավելի ուշ ժամկետ չի նշել:

39. Թույլտվություն ունեցող անձի դիմումի հիման վրա Թույլտվությունը կասեցվում է դիմումում նշված ժամկետով:

40. Հանձնաժողովը Թույլտվության կասեցման կամ դադարեցման գործընթաց նախաձեռնելու դեպքում հարուցում է վարչական վարույթ և առաջնորդվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներով:

41. Հանձնաժողովի նախաձեռնությամբ Թույլտվությունը կասեցված կամ դադարեցված է համարվում Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

(գլուխը լրաց. 01.04.15 N 56-Ն)

(հավելվածը լրաց., խմբ., փոփ. 01.04.15 N 56-Ն)

Հավելված N 1

ՀՀ հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի

## Ց Ա Ն Կ

ՄԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ (ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ  
ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱԶԳՄԱՆ) ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

N	Ներկայացվող փաստաթղթի անվանումը	Ռադիոսիրողի կարգավիճակը	
		Հայաստանի Հանրապետության քաղաքացի	Օտարերկրյա քաղաքացի
1	2	3	4
1	Անձնագրի պատճենը, իսկ 16 տարին չլրացած անձանց համար՝ ծննդյան վկայականի պատճենը	*	*
2	14-ից մինչև 18 տարեկան անչափահասների համար ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությունը	*	
3	Ռադիոսիրողի կարգը հավաստող փաստաթուղթ	*	
4	Տեղեկություններ	*	

	հայտատուի վերաբերյալ		*
5	Ռադիոսիրողի թույլտվության պատճենը		*
6	Հայաստանի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիայի միջնորդությունը		*
7	(կետն ուժը կորցրել է 01.04.15 N 56-Ն)		

(հավելվածը փոփ. 01.04.15 N 56-Ն)

**Հավելված N 2**

ՀՀ հանրային ծառայությունները

կարգավորող հանձնաժողովի

2009 թ. օգոստոսի 26-ի N 527-Ն

որոշմամբ հաստատված կանոնների

**1-ԻՆ ԿԱՐԳԻ ՌԱԴԻՈՍԻՐՈՂՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՏԵՍԱԿԻ**

N	Ռադիոհաճախականության տիրույթը	Հզորությունը Վտ	Ճառագայթման տեսակը	Հիմունքներ (առաջնային, երկրորդական)
1	135,7 – 137,8 կՀց	100	SSB, CW, թվային կապ	երկրորդային

2	1810 - 1838 կՀց	100	CW, թվային կապ, 1836 կՀց QRP	առաջնային
3	1838 - 1940 կՀց	100	SSB, թվային կապ	առաջնային
4	1840 - 2000 կՀց	100	SSB, AM, թվային կապ	առաջնային
5	3500-3580 կՀց	1000	CW	առաջնային
6	3580-3650 կՀց	1000	CW, թվային կապ	առաջնային
7	3650 - 3800 կՀց	1000	SSB, թվային կապ	երկրորդային
8	7000 - 7100 կՀց	1000	SSB, CW, SSTV, թվային կապ	առաջնային
9	7100-7200 կՀց	1000	SSB, թվային կապ	առաջնային
10	10100 - 10150 կՀց	1000	CW, SSTV, թվային կապ	երկրորդային
11	14000 - 14125 կՀց	1000	CW	առաջնային
12	14125 - 14350 կՀց	1000	SSB, թվային կապ	առաջնային
13	18068 – 18168 կՀց	1000	SSB, CW, SSTV, թվային կապ	առաջնային
14	21000 - 21120 կՀց	1000	CW	առաջնային
15	21120 - 21450 կՀց	1000	CW, SSTV, SSB, թվային կապ	առաջնային

16	24890 - 24990 կՀց	1000	SSB, CW, SSTV, թվային կապ	Երկրորդային
17	28,0 - 29,7 ՄՀց	1000	CW, AM, SSB, SSTV, FM, թվային կապ	առաջնային
18	29520 - 29700 ՄՀց	1000	AM, FM, թվային կապ (օգտագործվում է միայն Վերահաղորդիչներում)	առաջնային
19	144,0 - 146 ՄՀց	100	AM, FM, SSB, SSTV, թվային կապ	առաջնային
20	430 - 432 ՄՀց	50	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
21	432 - 438 ՄՀց	50	FM, SSB, SSTV, թվային կապ	առաջնային
22	438 - 440 ՄՀց	50	FM, SSB, SSTV, թվային կապ	առաջնային
23	1240 - 1300 ՄՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
24	2400 - 2450 ՄՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
25	5650 - 5670 ՄՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
26	5670 - 5725 ՄՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
27	5725 - 5830 ՄՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
28	5830 - 5850 ՄՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային

29	10,375 - 10,45 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
30	10,45 - 10,5 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
31	24,0 - 24,05 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
32	24,05 - 24,25 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
33	47,0 - 47,2 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	առաջնային
34	76,0 - 77,5 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
35	77,5 - 78 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	առաջնային
36	78 - 79 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
37	79 - 81 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
38	122,25 - 123 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
39	134 - 136 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	առաջնային
40	136 - 141 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
41	241 - 248 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
42	248 - 250 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	առաջնային

(հավելվածը խմբ. 01.04.15 N 56-Ն)

## Հավելված N 3

ՀՀ հանրային ծառայությունները

կարգավորող հանձնաժողովի

2009 թ. օգոստոսի 26-ի N 527-Ն

որոշմամբ հաստատված կանոնների

**2-րդ ԿԱՐԳԻ ՌԱԴԻՈՍԻՐՈՂՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ  
ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՏԵՍԱԿԻ**

N	Ռադիոհաճախականության տիրույթը	Հզորությունը Վտ	Ճառագայթման տեսակը	Հիմունքներ (առաջնային, երկրորդական)
1	135,7 – 137,8 կՀց	50	SSB, CW, թվային կապ	երկրորդային
2	1810 - 1850 կՀց	10	CW, թվային կապ, QRP	առաջնային
3	1838 - 1840 կՀց	10	SSB, CW, թվային կապ	առաջնային
4	1900 - 2000 կՀց	10	SSB, AM, թվային կապ	առաջնային
5	3500-3650 կՀց	100	CW, թվային կապ	առաջնային
6	3650 - 3800 կՀց	100	SSB, CW	երկրորդային
7	7000 - 7200 կՀց	100	SSB, CW, SSTV, թվային կապ	առաջնային

8	14000 - 14350 կՀց	100	SSB, CW, SSTV, թվային կապ	առաջնային
9	14250 - 14350 կՀց	100	SSB, CW, թվային կապ	առաջնային
10	21000 - 21450 կՀց	100	SSB, CW, SSTV, թվային կապ	առաջնային
11	28,0 - 29,7 ՄՀց	100	SSB, CW, SSTV, FM, AM, թվային կապ	առաջնային
12	144,0 - 146 ՄՀց	50	AM, FM, SSB, SSTV, թվային կապ	առաջնային
13	430 - 432 ՄՀց	50	SSB, SSTV, FM, թվային կապ	երկրորդային
14	432 - 440 ՄՀց	50	SSB, SSTV, FM, թվային կապ	առաջնային
15	1240 - 1300 ՄՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	երկրորդային
16	5650 - 5670 ՄՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	երկրորդային
17	10,375 - 10,45 ԳՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	երկրորդային
18	10,45 - 10,5 ԳՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	երկրորդային
19	47,0 - 47,2 ԳՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	առաջնային
20	76,0 - 77,5 ԳՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	երկրորդային
21	77,5 - 78 ԳՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	առաջնային

22	78 - 79 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
23	79 - 81 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
24	122,25 - 123 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
25	134 - 136 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	առաջնային
26	136 - 141 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
27	241 - 248 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
28	248 - 250 ԳՀg	5	FM, SSB, SSTV, թվային կապ	առաջնային

(հավելվածը խմբ. 01.04.15 N 56-Ն)

Հավելված N 4

ՀՀ հանրային ծառայությունները

կարգավորող հանձնաժողովի

2009 թ. օգոստոսի 26-ի N 527-Ն

որոշմամբ հաստատված կանոնների

**3-րդ ԿԱՐԳԻ ՌԱԴԻՈՍԻՐՈՂՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ  
ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՏԵՍԱԿԻ**

N	Ռադիոհաճախականության տիրույթը	Հզորությունը Վտ	Ճառագայթման տեսակը	Հիմունքներ (առաջնային, երկրորդական)

1	135,7 – 137,8 կՀց	50	SSB, CW	Երկրորդային
2	1810 - 1850 կՀց	10	CW, թվային կապ	առաջնային
3	1850 - 1930 կՀց	10	SSB, CW, թվային կապ	առաջնային
4	1900 - 2000 կՀց	10	SSB, AM, թվային կապ	առաջնային
5	3500-3650 կՀց	50	SSB, CW, թվային կապ	առաջնային
6	28,0 - 29,7 ՄՀց	50	SSB, FM, CW, SSTV, թվային կապ	առաջնային
7	144,0 - 146 ՄՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	առաջնային
8	430 – 432 ՄՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
9	432 – 440 ՄՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	առաջնային
10	1240 - 1300 ՄՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
11	5650 - 5670 ՄՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
12	10,375 - 10,45 ԳՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
13	10,45 - 10,5 ԳՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	Երկրորդային
14	47,0 - 47,2 ԳՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	առաջնային

15	76,0 - 77,5 ԳՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	երկրորդային
16	122,25 - 123 ԳՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	երկրորդային
17	134 - 136 ԳՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	առաջնային
18	136 - 141 ԳՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	երկրորդային
19	241 - 248 ԳՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	երկրորդային
20	248 - 250 ԳՀց	5	FM, SSB, SSTV, թվային կապ	առաջնային

(հավելվածը խմբ. 01.04.15 N 56-Ն)

Հավելված N 5

ՀՀ հանրային ծառայությունները

կարգավորող հանձնաժողովի

2009 թ. օգոստոսի 26-ի N 527-Ն

որոշմամբ հաստատված կանոնների

Հայաստանի Հանրապետության հանրային  
ծառայությունները կարգավորող հանձնաժողովին

Դ Ի Մ ՈՒ Մ

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ ՏՐԱՄԱԴՐԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԻՐՈՂԱԿԱՆ  
ՌԱԴԻՈՊԵՐԱՏՈՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ԵՐԿԱՐԱԶԳԵԼ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ)  
-ընդգծել

(մարզը, բնակավայրը)

(թույլտվություն հայցողի անունը, հայրանունը, ազգանունը, բնակավայրը, հեռախոսը)

Հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով  
ներկայացրած փաստաթղթերում առկա տվյալներն ամբողջական են և հավաստի:

Սույն դիմումին կցվում են՝

1. \_\_\_\_\_

(փաստաթղթերի անվանումը)

(օրինակների և էջերի քանակը)

2. \_\_\_\_\_

3. \_\_\_\_\_

4. \_\_\_\_\_

\_\_\_\_\_

(անունը, ազգանունը)

\_\_\_\_\_

(ստորագրությունը)

«\_\_» \_\_\_\_\_ 200\_\_թ.

Հավելված N 6

ՀՀ հանրային ծառայությունները

կարգավորող հանձնաժողովի

2009 թ. օգոստոսի 26-ի N 527-Ն

որոշմամբ հաստատված կանոնների

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՍԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈՊԵՐԱՏՈՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ  
ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՅՐԱԾ ԱՆՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հայտատու \_\_\_\_\_

(հայտատուի անունը, հայրանունը, ազգանունը)

2. Ծննդյան թիվը \_\_\_\_\_

3. Ծննդավայրը \_\_\_\_\_

4. Կրթությունը \_\_\_\_\_

5. Լեզուների իմացությունը \_\_\_\_\_

6. Գրանցումը \_\_\_\_\_

(հիմնական/ժամանակավոր, բնակավայրը)

7. Անձնագրային տվյալները \_\_\_\_\_

8. Հեռախոսը \_\_\_\_\_

9. Ազդականչը \_\_\_\_\_

(լրացվում է թույլտվության ժամկետը երկարաձգելու դեպքում)

\_\_\_\_\_  
(անունը, հայրանունը, ազգանունը)\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

«\_\_\_» \_\_\_\_\_ 200\_\_թ.

Հավելված N 7

ՀՀ հանրային ծառայությունները

կարգավորող հանձնաժողովի

2009 թ. օգոստոսի 26-ի N 527-Ն

որոշմամբ հաստատված կանոնների

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ ԿՏՐՈՆ

Թույլտվությունը տրամադրվել է համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի

200 \_\_ թ. \_\_\_\_\_ «\_\_\_»-ի

N \_\_\_\_\_ որոշման

Թույլտվության համարը N \_\_\_\_\_

Թույլտվությունը ստացել է՝

(Թույլտվություն ստացող անձի անունը, հայրանունը, ազգանունը)

(անձնագրի կամ այն փոխարինող փաստաթղթի սերիան և համարը, ում կողմից և երբ է տրված)

(հասցեն, հեռախոսը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը)

Թույլտվությունը ստացվել է՝

«\_\_\_» \_\_\_\_\_ 200\_\_ թ.

(Թույլտվությունն ստացողի ստորագրությունը)

Իսկականի հետ ճիշտ է՝

«\_\_\_» \_\_\_\_\_ 200\_\_ թ.

(Թույլտվությունն ստացողի ստորագրությունը)

(հավելվածը լրաց., խմբ., փոփ. 01.04.15 N 56-Ն)

Հավելված N 2

Հաստատված է  
ՀՀ հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի  
2009 թ. օգոստոսի 26-ի  
N 527-Ն որոշմամբ

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ՄԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈԿԱՅԱՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ, ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

Սույն կանոնները սահմանում են սիրողական ռադիոկայանների գրանցման, տեղադրման և օգտագործման պայմանները:

Գ Լ ՈՒ Խ 1

## ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն կանոններում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

Թույլտվություն՝ Հանձնաժողովի կողմից ֆիզիկական անձին տրված փաստաթուղթ, որը հավաստում է սիրողական ռադիոյով զբաղվելու նրա իրավունքը.

Սիրողական ռադիո՝ շահույթի նպատակ չհետապնդող ռադիոկապ ռադիոսիրողների միջև, այդ թվում՝ հաղորդակցություն, որն ուղղակիորեն առնչվում է մարդու կյանքի նկատմամբ որևէ սպառնալիքի կամ որևէ դժբախտ պատահարի կանխարգելման, կամ դժբախտ պատահարների հետևանքների վերացման հետ:

Սիրողական ռադիոսպերատոր (այսուհետ՝ Ռադիոսիրող)՝ սիրողական ռադիոկապ իրականացնող ֆիզիկական անձ:

Սիրողական ռադիոկայան (այսուհետ՝ Ռադիոկայան)՝ ռադիոկապի հնարավորություն ընձեռող ռադիոսարքավորում (ինքնաշեն կամ գործարանային արտադրության), որը շահագործվում է Սիրողական ռադիոյի համար հատկացված ռադիոհաճախականությունների տիրույթում.

Անձնական օգտագործման Ռադիոկայան (այսուհետ՝ Անձնական Ռադիոկայան)՝ Ռադիոկայան, որի օգտագործման համար պատասխանատվություն է կրում տվյալ Ռադիոկայանը Հանձնաժողովում գրանցած՝ Թույլտվություն ունեցող Ռադիոսիրողը,

Կոլեկտիվ օգտագործման սիրողական ռադիոկայան (Կոլեկտիվ Ռադիոկայան)՝ Ռադիոկայան, որը կարող է օգտագործվել Թույլտվություն ունեցող ռադիոսիրողների ցանկացած կոլեկտիվի կողմից՝ անկախ նրա հասարակական պատկանելությունից կամ գերատեսչական ենթակայությունից:

Ազդականչ՝ լատինական այբուբենի տառերի և արաբական թվերի համադրությամբ կազմված բառ, որը հաղորդվում է ռադիոկապի յուրաքանչյուր սեանսից առաջ և սեանսի ընթացքում, որը ծառայում է Ռադիոսիրողին կամ Ռադիոկայանին ճանաչելու համար:

Գերկարճալիք ռադիոսիրողական վերահաղորդիչ (այսուհետ՝ Վերահաղորդիչ)՝ ընդունող-հաղորդող ռադիոկայան, որն աշխատում է ավտոմատ ռեժիմում և լրիվ դուպլեքսի ռեժիմում ի վիճակի է հաղորդել ընդունած ազդանշանները միջազգային ստանդարտին համապատասխան ռադիոհաճախականություններով և ռադիոհաճախականությունների բաժանվածությամբ:

Գործ՝ Ռադիոկայանի անվանական թղթապանակ, որը պարունակում է Ռադիոկայանների գրանցման, տեղադրման և օգտագործման նպատակով Հանձնաժողով ներկայացված փաստաթղթեր (տեղեկություններ):

## Գ Լ ՈՒ Խ 2

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2. Ռադիոկայանի կառուցվածքը պետք է ապահովի նրա անվտանգ սպասարկումը և բացառի շրջապատողներին էլեկտրական հոսանքով վնասելու հնարավորությունը:

3. Ռադիոկայանները արտակարգ իրավիճակներում կարող են ներգրավվել ռադիոկապի կազմակերպման համար, ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այնպես էլ արտասահմանյան երկրներում երրորդ դեմքով ինֆորմացիայի հաղորդման իրավունքով, համաձայն միջազգային պայմանագրերի ու համաձայնագրերի:

4. Օտարերկրյա Ռադիոսիքողներն իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործել իրենց սարքավորումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Ռադիոկայանները կարող են օգտագործվել միայն սիրողական ռադիոկապի նպատակով:

6. Ռադիոկայանը կարող է աշխատել հաղորդման վրա Ռադիոսիքողի թույլտվության կարգին համապատասխանող ռադիոհաձախականությունների տիրույթների սահմաններում ցանկացած ռադիոհաձախականության վրա: Ռադիոսիքողները պարտավոր են աշխատանքային ռադիոհաձախականությունները օգտագործել այնպես, որպեսզի ռադիոհաձախականության ցանկացած փոփոխման (այդ թվում՝ ռադիոհաձախականության կայունության շեղման) դեպքում ճառագայթվող ազդանշանները միշտ գտնվեն տվյալ Ռադիոսիքողի Թույլտվության կարգին համապատասխանող ռադիոհաձախականությունների տիրույթների սահմաններում:

7. Ռադիոսիքողների կողմից երկրորդային հիմունքով օգտագործվող ռադիոհաձախականությունների տիրույթում աշխատելիս, Ռադիոկայանները չպետք է խանգարումներ ստեղծեն առաջնային հիմունքով աշխատող Ռադիոկայանների աշխատանքին և պարտավոր են խանգարումներ ստեղծելու դեպքում անմիջապես փոխել աշխատանքային ռադիոհաձախականությունը:

8. Ռադիոկայանները պետք է բավարարեն ռադիոհաձախականության կայունության հետևյալ պահանջներին, որոնք որակվում են որպես հաձախականության բացարձակ շեղում ռադիոկապի սկզբից 15 րոպեի ընթացքում՝

1) 1-ին և 2-րդ կարգի Ռադիոսիքողների կողմից շահագործվող կայանի համար 30ՄՀգ-ից ցածր տիրույթներում՝ 300Հգ-ից ոչ ավելի, գերկարձալիք (այսուհետ՝ ԳԿԱ) տիրույթներում՝ 1000Հգ-ից ոչ ավելի:

2) 3-րդ կարգի Ռադիոսիքողի կողմից շահագործվող կայանի համար 1,8ՄՀգ, 3,5ՄՀգ տիրույթներում՝ 500Հգ-ից ոչ ավելի, 28ՄՀգ տիրույթում՝ 2000Հգ-ից ոչ ավելի, ԳԿԱ տիրույթում՝ 10 կՀգ-ից ոչ ավելի:

(8-րդ կետը փոփ. 01.04.15 N 56-Ն)

9. Ռադիոկայանների հաղորդիչների առաջացրած կողմնակի ճառագայթումների միջին հզորությունը պետք է լինի՝

1) մինչև 5Վտ հզորությամբ հաղորդիչների համար 30ՄՀգ-ից ցածր տիրույթներում աշխատելու դեպքում հիմնական ճառագայթման հզորությունից 30դԲ ցածր:

2) այլ հաղորդիչների համար 30ՄՀգ-ից ցածր տիրույթներում՝ հիմնական ճառագայթման հզորությունից 40 դԲ ցածր, բայց 50 մՎտ-ից ոչ ավելի:

3) 144ՄՀգ, 430ՄՀգ և 1296ՄՀգ ռադիոհաձախականություններով ԳԿԱ տիրույթներում աշխատող հաղորդիչների համար՝ 25մՎտ-ից ոչ ավելի:

10. Ռադիոկայանը պետք է ապահովի աշխատանքը Թույլտվությունում նշված ռադիոհաձախականությունների տիրույթներում և չգերազանցի հզորությունների թույլատրված մակարդակները: Նույն ընտանիքի անդամների կողմից Ռադիոկայանի համատեղ օգտագործման դեպքում կայանի հաղորդիչ սարքավորումը պետք է ապահովի ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի թույլտվությունում նշված հզորության մակարդակներով աշխատելու հնարավորություն:

11. Կախված Թույլտվության կարգից, Ռադիոսիրողները կարող են կիրառել ճառագայթման հետևյալ տեսակները՝

- 1) ռադիոհեռագրություն ամպլիտուդային մանիպուլյացիայով (CW).
- 2) ռադիոկապ ամպլիտուդային մանիպուլյացիայով (AM, USB).
- 3) ռադիոկապ հաճախային մոդուլյացիայով (FM).
- 4) թվային կապի տեսակներ (PACKET, PACKETOR, AMTOR, UUTV, BPUK-31, RRTY և այլն):

### Գ Լ ՈՒ Խ 3

#### ՍԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈԿԱՅԱՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

12. Անձնական և կոլեկտիվ օգտագործման Ռադիոկայանների, ինչպես նաև Վերահաղորդիչների գրանցումն իրականացնում է Հանձնաժողովը՝ սույն կանոնների համաձայն:

13. Ռադիոկայանների և Վերահաղորդիչների շահագործումը թույլատրվում է միայն Հանձնաժողովում դրանց գրանցումից հետո:

14. Ռադիոկայանների կամ Վերահաղորդիչների գրանցման համար Թույլտվություն ունեցող Ռադիոսիրողները դիմում են Հանձնաժողով՝ լրացնելով N 1 կամ N 2 հավելվածներում տրված դիմումի ձևը:

15. Ռադիոսիրողի դիմումը մուտքագրվում է Հանձնաժողովում: Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումը ստուգում է դիմումում ընդգրկված չափորոշիչների համապատասխանությունը սույն կանոնների դրույթներին:

16. Դիմումները քննարկվում և արդյունքների մասին տեղյակ են պահվում Ռադիոսիրողներին 10 աշխատանքային օրվա ընթացքում:

(16-րդ կետը փոփ. 01.04.15 N 56-Ն)

17. Ռադիոսիրողը, օրենքով սահմանված կարգով, պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:

18. Յուրաքանչյուր Ռադիոկայանի կամ Վերահաղորդչի համար կազմվում է Գործ:

19. Անձնական կամ կոլեկտիվ օգտագործման Ռադիոկայանների տեղակայման վայրի փոփոխման դեպքում Ռադիոսիրողը (Կոլեկտիվ Ռադիոկայանի պետը) այդ մասին տեղյակ է պահում Հանձնաժողովին նոր վայրում առաջին ռադիոսեանսն անցկացնելուց առնվազն 10 օր առաջ:

### Գ Լ ՈՒ Խ 4

#### ՍԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

20. Անձնական Ռադիոկայանը տեղադրվում է նրա սեփականատեր Ռադիոսիրողի բնակվելու վայրում (հասցեում): Անձնական Ռադիոկայանը չի թույլատրվում տեղադրել հանրակացարաններում, որտեղ մեկ սենյակում բնակվում են մի քանի հոգի (բացառությամբ ընտանեկան հանրակացարանների) և կոմունալ բնակարանների ընդհանուր օգտագործման վայրերում: Ժամանակավոր օգտագործումը թույլ է տրվում նաև

Ռադիոսիրողի ամառանոցից:

21. Անձնական Ռադիոկայանից կարող է օգտվել Թույլտվություն ունեցող ցանկացած Ռադիոսիրող՝ Ռադիոկայանի սեփականատեր Ռադիոսիրողի ներկայությամբ, սակայն իրեն ազդականչով:

22. Կոլեկտիվ Ռադիոկայանը պետք է տեղադրված լինի այնպես, որ բացառվի նրա շահագործումը Կոլեկտիվ Ռադիոկայանի պետի, նրա տեղակալների կամ ինքնուրույն աշխատելու թույլտվություն ունեցող անձանց բացակայության դեպքում:

23. Կոլեկտիվ Ռադիոկայանների պետեր կամ նրանց տեղակալներ կարող են լինել միայն 18 տարին լրացած անձինք, որոնք ունեն ոչ պակաս, քան 3 տարվա ռադիոսիրողական եթերում աշխատելու փորձ: Սույն կանոններում նշված տարիքը և ժամկետը կարող են նվազել մեկ տարով, եթե հարցը վերաբերվում է Հայաստանի Հանրապետության սահմանամերձ մարզերի Ռադիոսիրողներին:

24. Կոլեկտիվ Ռադիոկայանի պետը ապահովում է Ռադիոկայանի օգտագործումը Թույլտվություն ունեցող Ռադիոսիրողների կողմից: Կոլեկտիվ Ռադիոկայանի պետը իրավունք ունի թույլատրել Ռադիոկայանից աշխատելու ցանկացած անձի՝ իր ներկայությամբ: Աշխատանքը պետք է կատարվի կոլեկտիվ օգտագործման Ռադիոկայանի ազդականչով:

(24-րդ կետը խմբ. 01.04.15 N 56-Ն)

25. Կոլեկտիվ Ռադիոկայանի անտենայի սարքավորումների տեղադրման վերանորոգման և համալրման աշխատանքների անվտանգության համար պատասխանատվությունը կրում է Ռադիոկայանի պետը: Անձնական Ռադիոկայանների սեփականատերերը պատասխանատու են շենքերի տանիքներում տեղակայված՝ իրենց պատկանող անտենային կայմերի, նեցուկների և ամրակների տեղադրման տեղերի ծածկի պահպանման, ինչպես նաև շրջապատողների համար այդ կառույցների անվտանգ լինելու համար:

26. Հատկացված ռադիոհաճախականությունների տիրույթների սահմաններում Ռադիոսիրողները կարող են ռադիոկապ հաստատել միայն սիրողական ռադիոկայանների հետ (բացառությամբ սույն կանոնների 3-րդ կետում նշված դեպքի): Թույլատրվում է անցկացնել ռադիոկապ բազային երկրային վերահաղորդիչների, սիրողական ռադիոկապի Երկրի արհեստական արբանյակների վրա գտնվող վերահաղորդիչների միջոցով, ինչպես նաև ռադիոկապ նման արբանյակների վրա գտնվող պատասխանող ռոբոտների հետ: Ռադիոկապը այլ ռադիոկայանների հետ (ծառայողական և այլն) թույլատրվում է միայն վերջինների կողմից աղետի ազդանշաններ (UOU, MAYDAY) սիրողական ռադիոհաճախականության տիրույթներում հաղորդելու դեպքում:

27. Ռադիոսիրողները պարտավոր են հաղորդել Ռադիոկայանի ազդականչը յուրաքանչյուր ռադիոկապի սեանսի սկզբում և լրիվ ավարտից հետո, իսկ կապի երկարատև սեանսների ժամանակ կրկնել այն ոչ պակաս, քան հինգ րոպեն մեկ անգամ: Սպորտային միջոցառման մասնակցող Ռադիոսիրողները պետք է հաղորդեն իրենց ազդականչերը այնքան հաճախ, որքան պահանջում են տվյալ սպորտային միջոցառման կանոնները, բայց ոչ պակաս, քան հինգ րոպեն մեկ անգամ:

28. Ռադիոկապի ժամանակ Ռադիոսիրողները պետք է պահպանեն եթերային էթիկան և կատարեն միայն ռադիոսիրողական և ռադիոսպորտի, սիրողական ռադիոկայանի սարքավորումների տեխնիկական տվյալների, եղանակային և ռադիոալիքների տարածման պայմանների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում: Սույն կանոններում նշված թեմատիկայի սահմաններում ռադիոփոխանակումը իրականացվում է բաց տեքստով, օգտագործելով Q կոդի արտահայտությունները կամ ռադիոսիրողական կոդը:

29. Արգելվում է՝
- 1) պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկատվության հաղորդումը.
  - 2) ծածկագրերի, պայմանական կոդերի և կամայական կրճատումների օգտագործումը, բացառությամբ 28-րդ կետում նշված կոդերի և կրճատումների.
  - 3) կեղծ կամ մոլորեցնող տեղեկությունների հաղորդումը.
  - 4) առանց ազդականչերի կամ չնորհված ազդականչերով աշխատանքը.
  - 5) տվյալ Ռադիոսիրողի թույլտվության կարգի համար սահմանային թույլատրելի հզորության գերազանցումը և թույլատրելի ռադիոհաճախականությունների տիրույթներից դուրս աշխատելը.
  - 6) տվյալ Ռադիոսիրողի թույլտվության կարգի համար չնախատեսված ռադիոհաճախականությունների տիրույթներում և ճառագայթման ձևերով աշխատանքը.
  - 7) 28-րդ կետում նշված թեմատիկայի սահմաններից դուրս եկող բանակցությունների վարումը, եթերում քաղաքականության, կրոնի, սեքսի, գործարարությանը վերաբերող հարցերի քննարկումը.
  - 8) ռադիոկապի ժամանակ անվայել կամ վիրավորական արտահայտությունների օգտագործումը.
  - 9) ռադիոհաղորդումների, հեռուստածրագրերի ձայնային ուղեկցությունների, երաժշտական ձայնագրությունների և ամեն տեսակի գովազդի հաղորդումը.
  - 10) տեխնիկական պահանջներին և անվտանգության տեխնիկայի կանոններին չհամապատասխանող Ռադիոկայանների շահագործումը.
  - 11) ՍՕՍ կամ MAYDAY աղետների միջազգային ազդականչերի օգտագործումը (բացառությամբ 26-րդ կետում նշված դեպքի).
  - 12) երկրորդական հիմունքով սիրողական ռադիոկայաններին տրված ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործման կարգի խախտումը.
  - 13) Ռադիոկայանի օգտագործումը երրորդ անձանց համար (կողմից) տեղեկություններ հաղորդելու նպատակով (բացառությամբ 26-րդ կետում նշված դեպքի).
  - 14) թմրանյութի կամ ալկոհոլի ազդեցության տակ Ռադիոկայանով եթերում աշխատելը:
30. Ռադիոսիրողները պետք է հետևեն ընդունված ռադիոսիրողական էթիկային, ռադիոկապի ժամանակ ցուցաբերեն փոխադարձ հարգանք, նրբագացողություն և տակտ:
31. Վերահաղորդիչները կարող են տեղադրվել ցանկացած Ռադիոսիրողի կամ ռադիոսիրողների կոլեկտիվի կողմից: Վերահաղորդիչների համար կարող են օգտագործվել ընդունման-հաղորդման ռադիոհաճախականությունները, համաձայն Ռադիոսիրողական միջազգային միության 1-ին ռեգիոնի բաշխման: Վերահաղորդիչի հզորությունը չպետք է գերազանցի 100 Վտ, ռադիոկապի օգտագործվող տեսակը՝ F3E- հաճախականային մոդուլյացիա:

## Գ Լ ՈՒ Խ 5

### ՌԱԴԻՈՍԻՐՈՂՆԵՐԻ (ՄԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈԿԱՅԱՆՆԵՐԻ) ԱԶԴԱԿԱՆՉԵՐԸ

32. Ռադիոսիրողներին ազդականչերը շնորհվում են Հանձնաժողովի կողմից՝ Միջազգային Ռադիոկապի

Ռեգլամենտի պահանջներին համապատասխան:

33. Հայաստանի Հանրապետության Ռադիոսիրոդը կարող է ունենալ մշտական հիմունքով միայն մեկ ազդականչ, որը սկսվում է EK տառերով:

34. Հանձնաժողովը իրականացնում է՝

1) Միջազգային մրցումներին մասնակցելու համար (անհրաժեշտության դեպքում) հատուկ ազդականչերի շնորհումը՝ Հայաստանի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիայի պահանջի հիման վրա:

2) Հանրապետական կարգավիճակով՝ կարճալիք և գերկարճալիք տիրույթներում ռադիոկապի մրցումներին մասնակցելու համար ազդականչերի շնորհումը:

3) Օտարերկրյա ռադիոսիրոդներին Հայաստանի Հանրապետության տարածքում ժամանակավոր ազդականչերի շնորհումը՝ միայն Հայաստանի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիայի միջնորդության հիման վրա: Ժամանակավոր ազդականչը կազմվում է՝ EK/, որից հետո ավելանում է օտարերկրյա Ռադիոսիրոդի ազդականչը:

4) Հանրապետական կարգավիճակով (հավաքներ, հոբելյաններ և այլն) միջոցառումների անցկացման ժամանակ Ռադիոկայաններին հատուկ ազդականչերի շնորհումը:

35. Ռադիոսիրոդներին մշտական ազդականչերի շնորհվում են համաձայն Միջազգային Ռադիոկապի Ռեգլամենտի: Բոլոր Ռադիոսիրոդներին շնորհվում են վեցանիշ ազդականչեր: 2-րդ և 1-ին կարգ ունեցող Ռադիոսիրոդների վեցանիշ ազդականչերը վերջիններիս ցանկության դեպքում կարող են փոխարինվել հնգանիշ ազդականչերով: 1-ին կարգի ճանաչված և բարձր որակավորում ունեցող Ռադիոսիրոդների ազդականչը կարող է փոխարինվել քառանիշ ազդականչով: Ազդականչի տրամադրումը և փոխարինումը կատարվում է Հանձնաժողովի կողմից, Ռադիոսիրոդի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիայի միջնորդությամբ:

## Գ Լ ՌԻ Խ 6

### ՄԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈԿԱՅԱՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

36. Յուրաքանչյուր Ռադիոկայանի տեղակայման վայրում պետք է գտնվեն՝

1) Սույն կանոնները.

2) Ռադիոսիրոդի Թույլտվությունը.

3) Տեղեկություն Ռադիոկայանի գրանցման մասին.

4) Ապարատային մատյանը կամ համակարգիչ:

37. Ապարատային մատյանում կամ համակարգչում պետք է նշված լինեն հետևյալ տեղեկությունները՝

1) ռադիոկապի անցկացման ամսաթիվը և ժամը.

2) սիրողական ռադիոկայանի ազդականչը, որի հետ կայացված է ռադիոկապը.

3) ռադիոհաճախականության տիրույթը և ճառագայթման տեսակը.

4) ազդանշանի գնահատականը (ընդունված և հաղորդված):

38. Ապարատային մատյանում (համակարգչում) կարելի է չգրանցել տեղեկություններ մրցումների ընթացքում

անցկացված ռադիոկապի մասին: Այդ դեպքում նշվում է աշխատանքի պարբերականությունը և անվկացված ռադիոկապերի քանակը:

39. Ապարատային մատյանի կամ համակարգչում գրանցված տեղեկատվության պահման ժամկետը 3 տարուց ոչ պակաս է՝ նրա մեջ գրանցված վերջին ռադիոկապի անցկացման պահից:

40. Ռադիոկայանը, ապարատային մատյանը կամ համակարգչում գրանցված տեղեկատվությունը պետք է մատչելի լինեն Հանձնաժողովի ներկայացուցիչների համար:

41. Գերկարձալիք շարժական ռադիոկայանի աշխատանքի դեպքում մատյանի վարումը կամ համակարգչում տեղեկատվության գրանցումը պարտադիր չէ:

#### Գ Լ ՈՒ Խ 7

#### ՍԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈԿԱՅԱՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՌԱԴԻՈՍՊՈՐՏԻ ՄԱՐԶԱԶԵՎԵՐԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՌԱԴԻՈԼԵԿԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

42. Սպորտային ռադիոպելենգացիայի (ադվեսավորս) մրցումների ապահովման համար թույլատրվում է 3500-3650 կՀց և 144-146 ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթներում օգտագործել ոչ ավելի քան 6 հադորդիչ, յուրաքանչյուրը մինչև 5 Վտ հզորությամբ՝ հեռագրային կամ հեռախոսային ռեժիմով:

Սպորտային ռադիոպելենգացիայի համար ռադիոհադորդիչներին տրվում են հետևյալ ազդականչերը՝

N	Նշանակումը	Ազդականչերը	
		հեռագիր	հեռախոս
1		MO (MOT)	«ադվես»
2	ադվես - 1	MOE	«ադվես առաջին»
3	ադվես - 2	MOI	«ադվես երկրորդ»
4	ադվես - 3	MOS	«ադվես երրորդ»
5	ադվես - 4	MOH	«ադվես չորրորդ»

6	աղվես - 5	MO5	«աղվես հինգերորդ»
---	-----------	-----	-------------------

43. Ռադիոսպորտի մարզաձևերի մրցումներին մասնակցելու համար Ռադիոկայանների օգտագործման թույլտվությունը և ազդականչերը տրվում են ժամանակավոր, մրցման համար նախատեսված ժամանակահատվածի համար՝ Հայաստանի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիայի կողմից:

44. Ռադիոբազմամարտի մրցումների ապահովման համար թույլատրվում է 1830-1930կՀց և 3500-3650կՀց ռադիոհաճախականությունների տիրույթներում օգտագործել մինչև 5Վտ հզորությամբ հաղորդիչներ՝ հեռագրային կամ հեռախոսային ռեժիմով:

45. Ռադիոդեկավարման մոդելների համար թույլատրվում է օգտագործել 28000-28200կՀց և 144-146ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթները, 25կՀց-ից ոչ ավելի զբաղեցվող տիրույթով՝ 1Վտ-ից ոչ ավելի հզորությամբ և 26957-27283կՀց ռադիոհաճախականությունների տիրույթները, 20կՀց ոչ ավելի զբաղեցված տիրույթով՝ 0,5Վտ-ից ոչ ավելի հզորությամբ ռադիոհաղորդիչները: Նշված ռադիոհաղորդիչները պետք է օգտագործվեն բացառապես մոդելների դեկավարման հրամանների հաղորդման համար: Այդպիսի ռադիոհաղորդիչների օգտագործումը ռադիոկապի համար խստիվ արգելվում է:

(հավելվածը փոփ., խմբ. 01.04.15 N 56-Ն)

Հավելված N 1

ՀՀ հանրային ծառայությունները

կարգավորող հանձնաժողովի

2009 թ. օգոստոսի 26-ի N 527-Ն

որոշմամբ հաստատված կանոնների

Հայաստանի Հանրապետության հանրային  
ծառայությունները կարգավորող հանձնաժողովին

Վ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ գրանցել անձնական/կոլեկտիվ օգտագործման սիրողական ռադիոկայանը (ընդգծել)

(մարզը, բնակավայրը)

Ռադիոսիրողի անունը, հայրանունը, ազգանունը \_\_\_\_\_

Թույլտվության կարգը և համարը \_\_\_\_\_

Ռադիոկայանի տեղակայման հասցեն \_\_\_\_\_

Ռադիոկայանի մականիշը \_\_\_\_\_ Ռադիոկայանի հզորությունը \_\_\_\_\_

Հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացրած տվյալներն ամբողջական են և հավաստի:

\_\_\_\_\_

(անունը, ազգանունը)

\_\_\_\_\_

(ստորագրությունը)

«\_\_» \_\_\_\_\_ 200\_\_թ.

Հավելված N 2

ՀՀ հանրային ծառայությունները

կարգավորող հանձնաժողովի

2009 թ. օգոստոսի 26-ի N 527-Ն

որոշմամբ հաստատված կանոնների

Հայաստանի Հանրապետության հանրային  
ծառայությունները կարգավորող հանձնաժողովին

Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ գրանցել գերկարճալիք ռադիոսիրողական վերահաղորդիչը

\_\_\_\_\_

(մարզը, բնակավայրը)

Ռադիոսիրողի անունը, հայրանունը, ազգանունը \_\_\_\_\_

\_\_\_\_\_

Թույլտվության կարգը և համարը \_\_\_\_\_

Վերահաղորդչի տեղակայման հասցեն \_\_\_\_\_

Վերահաղորդչի մակնիշը \_\_\_\_\_ Վերահաղորդչի հզորությունը \_\_\_\_\_

Հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացրած տվյալներն ամբողջական են և հավաստի:

\_\_\_\_\_  
(անունը, ազգանունը)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

(հավելվածը փոփ., խմբ. 01.04.15 N 56-Ն)

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 200\_\_թ.

Հավելված N 3

Հաստատված է  
ՀՀ հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի  
2009 թ. օգոստոսի 26-ի  
N 527-Ն որոշմամբ

Կ Ա Ր Գ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՍՏՈՒԳԵԼՈՒ

Սույն կարգը սահմանում է որակավորման չափանիշներին սիրողական ռադիոսպեկտրների համապատասխանության ստուգման ընթացակարգը:

1. Ռադիոսիրողի որակավորումը որոշվում է էլեկտրատեխնիկայի և ռադիոտեխնիկայի հիմունքների, անվտանգության տեխնիկայի և եթերում աշխատելու կանոնների իմացության վերաբերյալ քննության արդյունքների հիման վրա:

2. Որակավորման քննություններն ընդունում է Հայաստանի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիայի կողմից ստեղծված որակավորման հանձնաժողովը, որի կազմում ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ներկայացուցիչը: Որակավորման հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպում է սույն կարգի համաձայն:

3. Անձը, որը ցանկանում է ստանալ սիրողական ռադիոսպորտորդի որակավորման կարգ կամ բարձրացնել իր սիրողական ռադիոսպորտորդի որակավորման կարգը, պետք է դիմի Հայաստանի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիա՝ որակավորման քննություններ հանձնելու խնդրանքով: Դիմումը քննարկվում է մեկ ամսվա ընթացքում:

4. Որակավորման քննությունը բանավոր է:

5. Ռադիոսիրողի որակավորման քննության հարցաշարերը կազմվում են որակավորման հանձնաժողովի կողմից, հաշվի առնելով Հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ) կողմից ռադիոսիրողներին առաջադրված նվազագույն պահանջների ITU-R M.1544 հանձնարարականը: Ռադիոսպորտորդական յուրաքանչյուր կարգի համար կազմվում է առանձին հարցաշար:

6. Ռադիոսիրողի որակավորման քննության հարցաշարերը հաստատվում են Հայաստանի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիայի կողմից:

7. Ռադիոսիրողի որակավորման քննության հարցաշարերը պատք է տեղակայվեն Հայաստանի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիայի ինտերնետային կայքում:

8. Որակավորման հանձնաժողովն իրավասու է քննություն ընդունել, եթե ներկա է որակավորման հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ը՝ ներառյալ հանձնաժողովի նախագահը կամ տեղակալը:

9. Քննությունն անցկացվում է, անկախ քննությանը մասնակցելու համար դիմած անձանց քանակից:

10. Քննության հարցերը քննություն հանձնողին է տրվում քննությունն սկսելուց հետո՝ որակավորման հանձնաժողովի կողմից ռադիոսպորտորդական յուրաքանչյուր կարգի համար կազմված և համակարգչում գեներացված հարցաշարից պատահական ընտրության միջոցով: Հարցերի նվազագույն քանակը որոշվում է որակավորման հանձնաժողովի կողմից:

11. Ռադիոսիրողի որակավորման քննության արդյունքը՝ դրական կամ բացասական, որոշվում է որակավորման հանձնաժողովի անդամների բաց քվեարկությամբ՝ ձայների մեծամասնությամբ:

12. Ռադիոսիրողի որակավորման քննության դրական արդյունքի դեպքում ռադիոսիրողին տրամադրվում է կարգը հավաստող փաստաթուղթ՝ քննությանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

13. Հայաստանի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիայի միջնորդությամբ, միջազգային մրցումներում առաջատար տեղեր զբաղեցնող Ռադիոսիրողների որակավորման կարգը որակավորման հանձնաժողովի կողմից կարող է բարձրացվել առանց որակավորման քննություններ հանձնելու: Այս դեպքում Ռադիոսիրողին տրամադրվում է կարգը հավաստող փաստաթուղթ՝ որակավորման հանձնաժողովի կողմից որոշում ընդունելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: